

**«ԼՈՒՍԱՐԶԱԿ»
ՀԱԲԱԹԱԹԵՐԹԻ
ՀԶՈՐԱՅՈՒՄ»
ԾՐԱԳԻՐՆ
ԱՎԱՐՏՎԵՑ**

ԼՈՒՍԱՐԶԱԿ

ԱՆՎԱԽ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ INDEPENDENT WEEKLY NEWSPAPER НЕЗАВИСИМАЯ ЕЖЕНЕДЕЛЬНАЯ ГАЗЕТА

Մայիս, 2008 թ. թիվ 6 (4546)

Դեռևս 2006թ. հոկտեմբերին մեկնարկեց «Եվրասիա» հիմնադրամի «Մարզային մամուլի հզորացում» ծրագիրը, որի ընթացքում անցկացվեցին թերթերի կառավարման, կազմակերպական կառուցվածքի օպտիմալացման, էջադրման, ֆոտոլրագրության և այլ դասընթացներ: Մրցույթին մասնակցեցին շուրջ 60 մարզային տպագիր լրատվամիջոցներ, որոնցից 28-ն ընտրվեց մասնակցելու վերոնշյալ միջոցառումներին: Վերջիններին հաջորդեց դրամաշնորհային մրցույթը, որի արդյունքներն ամփոփվեցին 2007թ. հուլիսի 8-ին հիմնադրամի հոգեբարձուհիների խորհրդի նիստում: «Կումայրի», «Շրջապատ», (Գյումրի), «Սևան», (ք. Սևան), «Սյունաց երկիր», (ք. Կապան), «Բան ու գործ», (ք. Գորիս) թերթերի հետ միասին դրամաշնորհի արժանացավ նաև «Լուսարձակ» թերթի խմբագրության ներկայացրած «Լուսարձակ» շաբաթաթերթի հզորացում» ծրագիրը, որի շնորհիվ «Լուսարձակ» ուղիղ 10-ը ամիս շարունակ աշխատանքներ էր ծավալում թերթի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման, ֆինանսական կայուն աղբյուրների ձևավորման, թերթի հեղինակության բարձրացման, մարքեթինգային ռազմավարության պլանի մշակման ուղղությամբ:

Ծրագրի իրականացման փուլերի համաձայն ձեռք է բերվել «Պենտիում 4» մակնիշի համակարգիչ, մոնիտոր, սքաներ և այլ պարագաներ: Այնուհետև կատարվել է կադրերի ընտրություն՝ խմբագրակազմը համալրվել է 2 լրագրողով, մեկ դիզայներով և 4 ցրիչով: Ընթացքում «Այրեքս», Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի և այլ գործընկերների միջոցով կազմակերպվել է լրագրողների, դիզայների և ցրիչների ուսուցում: Անկախ փորձագետի միջոցով կազմվել է թերթի մարքեթինգային ռազմավարության հեռանկարային ծրագիրը: Ձեռք է բերվել և ներդրվել Quark Express ծրագիրը, 2007թ. հոկտեմբերից թերթը լույս է տեսնում նոր դիզայնով, որի ձևավորմանը իր աջակցությունն է բերել ամերիկյան խորհրդատու Էդի Չեմինգերը:

Խմբագրության կողմից կատարվել է հասարակական կարծիքի ուսումնասիրում, որի արդյունքներն օգտագործվել են թերթի մարքեթինգային պլանի մշակման ժամանակ: «Լուսարձակ» շաբաթաթերթի մասին տեղեկատվության տարածման, հասարակական կարծիքի բարելավման, տպագիր մամուլի նկատմամբ վստահության ամրապնդման նպատակով անց են կացվել 3 «Կլոր սեղաններ», որտեղ գեկուցումներով հանդես են եկել «Թիմ» հյ նախագահ Ալետ Դեմուրյանը, միջազգային խորհրդատու Լիա Քուլեմբերգը (ԱՄՆ), Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ Աստղիկ Գևորգյանը և նախագահի տեղակալ, գրող-հրապարակախոս Գրիգոր Ջանիկյանը:

Աշխատանքներ են տարվում թերթի պարբերականության և էջերի թիվը ավելացնելու ուղղությամբ: Արդեն փորձնական ձևով մի անգամ թերթը լույս է տեսել 8 էջով, որը լայն արձագանք է գտել և հավանության արժանացել ընթերցողների կողմից, նախատեսվում է մայիսից ավելացնել նաև թերթի լույս ընծայման պարբերականությունը:

→ 2



ՄՊԻՏԱԿԻ ԲԱՂԱՔԱՊԵՏ ԸՆՏՐՎԵՑ ԳԱԳԻԿ ՍԱՀԱԿՅԱՆԸ

2008թ. մայիսի 4-ին տեղի ունեցավ Սպիտակի քաղաքապետի ընտրություն, որի արդյունքում քաղաքապետ ընտրվեց Գագիկ Սահակյանը:

Գ. Սահակյանը ծնվել է 1965թ. Երևան քաղաքում, 1982թ. ավարտել է Երևանի թիվ 152 միջնակարգ դպրոցը, 1989թ.՝ Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտը, 1983-85թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1998թ. ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի շրջանակներում մասնակցել է արտադրության կազմակերպման և համակարգչային դասընթացներին, 1989-90թթ. աշխատել է «Հայստեմախազի» ինստիտուտում՝ որպես ինժեներ, 1990-91թթ.՝ «Աստղիկ» կոոպերատիվում՝ կարգավորող, 1991-93թթ.՝ ՀՀ շինարարության նախարարության Երազյան տրեստում՝ ինժեներ, 1993-94թթ.՝ «Սպիտակ» գյուղատնտեսական արտադրագիտական ձեռնարկությունում՝ գլխավոր ինժեներ, 1994-95թթ. «Արծիվ» արտադրական կոոպերատիվում՝

ինժեներ, 1995-97թթ. «Ջվարթնոց» օդանավակայանում՝ ավիացիոն անվտանգության ծառայության ավագ հսկիչ, 1997-2002թթ. «Սպիտակ» գյուղատնտեսական արտադրագիտական ՊՓԸ փոխտնօրեն, 2002-2004թթ. «Սպիտակի սերմնաբուծական տնտեսություն» ՊՓԸ տնօրեն, 2004-2006թթ. «Սպիտակ-ֆերմեր» ՄՊԸ տնօրեն, 2006թ.-ից մինչև մայիս «ՕՖՄա» ՄՊԸ տնօրեն: Ամուսնացած է, ունի 2 դուստր և 1 որդի: ՀՀ անդամ է:

«Լուսարձակ» իր ընթերցողների և խմբագրակազմի անունից շնորհավորում է պրն. Գ. Սահակյանին Սպիտակի քաղաքապետ ընտրվելու առթիվ, նրան մաղթում՝ քաջառողջություն և արգասավոր գործունեություն՝ համուն Սպիտակի զարգացման և աղետի հետևանքների իսպառ վերացման:


ՆՈՐ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ ՄՊԻՏԱԿՈՒՄ

1988-99թթ. Սպիտակի շրջանի ղեկավար, ԽՍՀՄ Ժողովրդական պատգամավոր, տնտեսագիտության դոկտոր Նորիկ Մուրադյանի նախաձեռնությամբ Սպիտակ քաղաքի մուտքի մերձակա բարձունքում նախատեսվում է կառուցել 1988թ. դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիր, որն ընդգրկում է 12 հա. տարածք: Սախատեսվում է երկրաշարժի զոհ դարձաց համրապետության յուրաքանչյուր քաղաքացու հիշատակին հուշահամալիրի տարածքում տնկել 26.500 ծառ, որից 15.000-ը 6-7 տարեկան հողաթմբով սոճիներ են, 11.500-ը տերևավոր ծառատեսակներ (5000-ը հացենի և թխկի, 5500-ը կեչի): Հուշահամալիրն արտացոլում է երկրաշարժի հետևանքով առաջացած երկրակեղևի ճեղքվածքը: Այն մտցվելու է միջազգային զբոսաշրջության ցանցի և մշակութային արժեքների պահպանության համաշխարհային կազմակերպության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցուցակի մեջ: Այս հուշահամալիրի կազմի մեջ ընդգրկվելու են նաև Սպիտակի հեռուստաշտարակին հարող բարձունքի վրա կիսավեր վիճակում գտնվող «Վերածնություն» հուշարձանը, ինչպես նաև՝ Սպիտակ-Վանաձոր ճանապարհին՝ Նոր Խաչակապ գյուղի դիմաց գտնվող ռուս զինվորների հիշատակին կառուցված հուշահամալիրը, որոնք նույնպես պետք է վերանորոգվեն: Հուշահամալիրի շինարարության

աշխատանքներն սկսելու առթիվ վերջերս Սպիտակ էր այցելել Նորիկ Մուրադյանը: Նա բնակվում է Մոսկվայում, բայց մշտապես մտահոգ է ծննդավայրի ու նրա մարդկանց ճակատագրով: Ն. Մուրադյանը սպիտակցիների համար մնում է որպես մեր քաղաքի ու տարածաշրջանի գյուղական բնակավայրի բարենորոգիչ ու վերածնունդ տվող անձնավորություն: Խորհրդային տարիներին՝ կարի ա/մ գլխավոր տնօրեն աշխատած ժամանակաշրջանում, նրա անմիջական գլխավորությամբ Սպիտակն ու տարածաշրջանի գյուղերը դարձել էին թեթև արդյունաբերության մի իսկական հսկայական գործատեղի, ուր աշխատում էր շուրջ 10.000 մարդ: Նրա հերոսական աշխատանքի շնորհիվ աշխատողների ու նրանց երեխաների համար կառուցվում էին բնակարաններ, մանկապարտեզներ, հանգստյան տներ, մանկական ճամբարներ, ինժեներական կառույցներ, կոմունալ-կենցաղային և սոցիալական նշանակության այլ օբյեկտներ: Այժմ էլ եկել է Սպիտակի հավերժացնելու ավերիչ երկրաշարժին կուլ գնացած 26.500 անմեղ զոհերի հիշատակը: Նա խմբագրությանը տրամադրեց կառուցվելիք հուշահամալիրի ետքից, հուշահամալիրի նախագծման և շինարարության կազմակերպման աշխատանքային խմբի անվանական կազմը, որոնք էլ ներկայացնում ենք ընթերցողների ուշադրությանը:

- Հայրենյան Ա. Ա.** - 1978-93թթ. Սպիտակ քաղաքի գլխավոր ճարտարապետ, կառուցվող հուշահամալիրի գլխավոր ճարտարապետ, Հայաստանի և Գերմանիայի ճարտարապետների միության անդամ, Գերմանիայի նկարիչների միության անդամ
- Միքայելյան Ա. Դ.** - Մոսկվայի Պլեխանովի անվան ակադեմիայի պրոֆեսոր, 1988թ. փրկարար, բարեգործ
- Բաղդասյան Ա.** - նկարիչ, ԽՍՀՄ նկարիչների միության անդամ
- Ասմարյան Ռ. Գ.** - 1989-93թթ. փրկարար-շինարար, ՌԴ վաստակավոր շինարար, բարեգործ
- Տիխոնով Գ. Ի.** - Սպիտակ քաղաքի շտաբի պետ, ՌԴ վաստակավոր էներգետիկ, Տաջիկստանի վաստակավոր շինարար, 1995-2003թթ. ՌԴ պետության միջին համընթացողի նախագահ

Ֆ. Ավուջանյան



ՀԱՍԱՐՈՒՄ

**«ԼՈՒՍԱՐԶԱԿ»
ՀՅՈՒՐԱՐԱՎՅՈՒՄ Է ԼՈՌՈՒ
ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
(ՆԱՏԱՎԱՅՐԸ ՄՊԻՏԱԿ)
ԱՂԱՍԻ ՄԿՈՅԱՆԸ**



Էջ 2

ՄԱՐԴԸ ՍԵՐ ԿՈՂԵՐՆ

**ԿԻԵՎԱԲՆԱԿ ՍԵՐ
ՀԱՅՐԵՆԱԿԻՑԸ
ՀՅՈՒՐԱՆԿԱԼԵԼ ԷՐ
ԱՐՄԵՆ ԶԻԳԱՐԻԱՆՅԱՆԻՆ**



Էջ 4

ՄԱՐԴԸ ՄԵՐ ԿՈՂՔԻՆ



ժամանակը երբեմն աննկատ է անցնում, սակայն տարիների հեռվից, երբ նայում ես մարդու անցած ուղուն, տեսնում ես նկատելի առաջընթաց, որը այդ ժամանակահատվածի ուղղակի կամ անուղղակի ձեռքբերումն է:

Չնայած այդ միտումով էլ կիրթման ներկայացնել մեր կողքին ապրող, մեր երկրի ու ժողովրդի շահերով տարված մի մարդու՝ Սերյոժա Ավագյանին, ով մեր կարծիքով օրինակելի անցյալ ու ներկա ունի և հուսադրող ու հեռանկարային գալիք: Նրան եմ ուղղում հարցեր՝ պարզելու այն ուղին, որով անխռով ու հաստատուն քայլել է իմ գրուցակիցը:

-Ո՞րն եք համարում Ձեր կյանքի նպատակը:

-Առաջին հերթին համոզված լինել, որ որոշ չափով օգտակար գործ ես կատարել, քո ուժերը ծառայեցրել ես երկրիդ ու ժողովրդիդ առաջընթացին: Մասնավորապես իմ կոչումն է: Գուցե հենց այդ մասնագիտությունն էր, որ տարավ ինձ այդ ապարեզ ու շուրջ 50 տարի դարձրեց դպրոցի ու սովորողների ուսուցիչն ու գործընկերը: Ժամանակը ցույց տվեց, որ երեխաների աշխարհը ինձ համար միակ հարազատ ու հեռանկարային ուղորտն է:

-Ո՞րտեղ և ե՞րբ եք սկսել աշխատանքային գործունեությունը:

Նախկին Սպիտակի շրջանի Մեծ Պարոնի, Կաթնաջուր, Ծաղկաբեր գյուղերի դպրոցներում՝ որպես ուսուցիչ: Իսկ 1963թ. աշխատանքի ընդունվեցի Ծիլքար գյուղում՝ որպես դպրոցի տնօրեն: Այս վերջինը շուրջ երկու տարի մասնավորակցելով կոլեկտիվի դեկավար աշխատելու առաջին և օգտակար փորձությունն էր: Այնուհետև Ձեր շրջանային «Լուսարծակ» թերթի խմբագրությունում՝ բաժնի վարիչ, իսկ ապա դարձյալ դպրոցի տնօրեն Սարամեջ գյուղում: Հանրապետության մակարդակի վառարարական կոնքրետ 1970թ. աշխատանքի եմ անցել հայրենի Լեռնանցքի միջնակարգ դպրոցում՝ որպես տնօրեն մինչև 2005թ.:

-Որո՞նք են եղել Ձեր սկզբունքները աշխատանքի ընթացքում:

Նախ և առաջ մատաղ սերնդի ուսման ու դաստիարակության հարցերը, նրանց մեջ նորի, առաջավորի ձգտումն արմատավորելը: Մայրենի լեզվի ու գրականության նկատմամբ սիրո, հարգանքի ձևավորումը, ինչպես նաև մեր երկրի ու ժողովրդի պատմության, նրա անցյալի, ներկայի ու ապագայի նկատմամբ ակնածանքի ու հայրենասիրության մղումը: Եվ այժմ էլ թեև անցել եմ վաստակած հանգստի՝ կենսաթոշակի, բայց հարազատ դարձած դպրոցից չեմ կարող բաժանվել ու դարձյալ աշխատում եմ: Առանց ուսուցչական ու աշակերտական կոլեկտիվների չեմ կարող ապրել:

-Ձեր կյանքի հիշարժան ու անմոռանալի իրադարձությունները:

Առաջին՝ երբ մասնակցեցի շրջանային, ապա հանրապետական մասնավորակցական ընթերցումներին, և իմ աշխատանքը մրցամակային տեղ շահեց՝ արժանանալով ՀՀ լուսավորության նախարարության (այն ժամա-

նակ այդպես էր կոչվում կրթության նախարարությունը) խրատուսանքին: Միաժամանակ այդ աշխատանքը մի քանի այլ առաջնություն շահած ընթերցումների հետ հրատարակվեց առանձին գրքույկով:

Երկրորդ՝ ամերիկյան կրթական դպրոցների «Այրեքսի» համայնքային ուսումնական ծրագրով հայտարարված դպրոցի տնօրենների մրցույթին մասնակցեցի, որտեղ հաղթող ճանաչված Լուուու մարզի տասը տնօրենների հետ փորձի ուսումնասիրման և փոխանակման նպատակով 2004թ. մարտ-ապրիլ ամիսներին 20-օրյա ծրագրով մեկնեցի ԱՄՆ, որն անշուշտ շատ բան տվեց թե մասնագիտական, թե ճանաչողական տեսակետից:

-Գուցե որոշ դրվագներ ներկայացնեք Ձեր ամերիկյան տպավորություններից:

Մեր պատվիրակությունը եղավ Այովայի, Իլինոյսի նահանգներում, Զիլագո և այլ քաղաքներում, ուր բազում հանդիպումներ ու աշխատանքային շփումներ ունեցանք քաղաքային ու համայնքային դպրոցներում, բուհ-երում: Ծանոթացանք դասավանդման ու կրթական համակարգերին, դասալուսմանը և գործնական քննարկումների մեջ: Զարմանալի բացահայտումներ արեցինք դպրոցների անսահմանափակ հնարավորությունների, տեխնիկական, մասնագիտական ու սպորտային բազաների առկայության, ինչպես նաև հաշվողական տեխնիկայի բազմազան ձևերի կիրառման մակարդակի հարցերում:

Այովայի նահանգային ռատուշայում մասնակցեցինք պատգամավորների նստաշրջանի քննարկումներին, ծանոթացանք մահանգի կենտրոն Դե Մոյնի կրթության դեպարտամենտի աշխատանքային որոշակի ուղորտների գործունեությանը: Դատարարական համակարգի աշխատանքները ևս ուսումնասիրեցինք: Պարզվեց, որ այնտեղ մեծ տեղ է հատկացվում սովորող երիտասարդության իրավական գիտելիքների զարգացմանն ու կողմնորոշմանը:

Այդ տեսակետից հետաքրքիր միջոցառման մասնակից դարձանք. ավագ դասարանների աշակերտներից ստեղծված էր երիտասարդ իրավագետների մահանգային խորհուրդ, որը կարող էր նույնիսկ անկախ դատական գործընթաց իրականացնել, որևէ հետաքրքիր հարցի շուրջ: Ի դեպ՝ ունկնդրեցինք այդպիսի մի դատական գործ, ուր թե՛ դատավորը, թե՛ մեղադրողը, թե՛ մեղադրյալն ու պաշտպաններն աշակերտներն էին: Իսկ սահանգային դատավորն ու դատախազը պարզապես դիտորդներ էին:

Ուշագրավ հանդիպումներ ունեցանք տեղի հայկական համայնքի ու նրա առանձին կառույցների ներկայացուցիչների հետ: Ծրագրված հանդիպում ունեցանք Զիլագոյում գործող 4

ՂԱՏԱՄԱԿԱՆ ՓՈՔՐԻԿ ԱՆԴՐԱԴԱՐԸ



ՂԱՏԱՄԱԿԱՆ ՓՈՔՐԻԿ ԱՆԴՐԱԴԱՐԸ

Բնակավայրը, որը ներկայումս կոչվում է Ղուրսալի, տարբեր ժամանակաշրջաններում մի քանի անգամ անայացել է վերստին բնակեցվել է: Ամենախուսումնազան հիշատակությունը և կենդանի հուշարձանը գյուղի կենտրոնում վեր խոյացող, 6-րդ դարում կառուցված Սբ. Գևորգ միախորան եկեղեցին է, որը կանգուն էր մինչև երկրաշարժը և ավերակեց երկրաշարժի ժամանակ: Ներկա պահին այն վերականգնված է և գործում է: Ըստ եկեղեցու արձանագրության գյուղն այդ ժամանակ կոչվել է Արշահուլիտ և պատկանել է Հայաստան երկրի Կերիմ Տաշիր կոչվող գավառին: Կերիմ 2-3 հարյուր տարիների ընթացքում գյուղը բնակեցված էր Դյուսիսային Իրանի Ատրպատական նահանգից (որը հետագայում դարձավ Աղբրեջան) այստեղ գաղթած բնակիչների մի հատվածով, որոնք 14-րդ դարում նվաճել էին սելջուկ թուրքերի կողմից և թուրքացվել: 1988թ. դեկտեմբերին նրանք իրենց գույքով հանդերձ ապահով տեղափոխվեցին Աղբրեջան: Նրանց գնալուց անմիջապես հետո տեղի ունեցավ ավերիչ երկրաշարժ, որի արդյունքում գյուղը փլատակվեց: Իսկ Սպիտակի «Չեքիաթ» ճամբարում տեղավորված էին Քաբվից, Կիրովաբադից, Խանլարի, Ծամբարի շրջաններից և այլ վայրերից բռնագաղթված հայ ընտանիքներ: Նրանց առաջարկվեց վերաբնակվել և վերաշինել Ղուրսալին:

Այս տանքահար ժողովուրդը պատսպարվեց վրաններում, ինքնաշեն տնակներում ու կացարաններում: Չետո իհարկե եղան հայտնի աջակցությունները և սկսվեց կառուցվել նոր գյուղը:

-Այս բոլոր շինությունները, ինչ որ տեսնում եք, փլատակներից մաքրվելով՝ կառուցվել են երկրաշարժից հետո, - պատմում է Ֆեոդոր Կարդաբախյանը, որն ամենակազմակերպող շրջանում զբաղվել է գյուղի կազմավորման և վարչական հարցերով՝ այն ժամանակվա Սպիտակի շրջանի ղեկավար Նորիկ Մուրադյանի հետ համագործակցությամբ: Գյուղում բնակություն հաստատեցին մոտ 130-160 ընտանիքներ: Այսպես ձևավորվեց և կազմավորվեց գյուղը: Ներկայումս գյուղն ունի շուրջ 160 տնտեսություն: Հիմնական զբաղմունքը անասնապահությունն ու հողագործությունն են: Արտադրված գյուղմթերքներն սպառվում են Վանաձորի և Սպիտակի շուկաներում:

Գյուղի կազմավորումից անմիջապես հետո Ֆեոդոր Կարդաբախյանը ձեռնամուխ եղավ կրթական համակարգի կազմավորման գործին: Այն ժամանակ գյուղում կային 63 դպրոցահասակ երեխաներ: Նրանց մեջ կային երեխաներ, որոնք ունեին ռուսական կրթություն, որոնց համար բացվել էր մասնատան, որոնց համար բացվել էր մասնատան կազմակերպման գործին՝ իր խորհուրդներով աջակցելով նոր, երիտասարդ տնօրեն՝ Գարեգին Քարաբախյանին: Գարեգին Քարաբախյանը ծնվել է 1981 թ. Լուուու մարզի Գուգար գյուղում: Ավարտել է ՎՊՄԻ-ի Ֆիզմատ ֆակուլտետի ֆիզիկայի բաժինը: Մասնավորապես նրան առաջին փորձը ձեռք է բերել գինվորական ծառայության ընթացքում՝ Գեղարքունիքի մարզի սահմանամերձ Արեգունի գյուղի միջնակարգ դպրոցում դասավանդելով ֆիզիկա:

Ֆեոդոր Կարդաբախյանը եղել է նորաբնակ Ղուրսալիի դպրոցի առաջին ինքնուրույն տնօրենը և պաշտոնավարել է մինչև 2006թ.: Նա ծնվել է 1941թ. ԼՂ-ի Մարտակերտի շրջանի Մաղավուզ գյուղում: Ավարտել է Բաբվի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի ֆակուլտետի հայկական բաժինը: 1969թ.-ից աշխատանքի է անցել Խանլարի շրջանում, սկզբում որպես գիշերօթիկ դպրոցի տնօրեն, հետո շրջկոմում տարբեր պաշտոններ է վարել մինչև 1988թ. դեկտեմբերի 4-ը, այնուհետև ընտանիքով տեղահանվել են, եկել Սպիտակ և մինչև օրս բնակվում են Ղուրսալի գյուղում: Մեծ է Ֆ. Կարդաբախյանի ավանդը Ղուրսալիի համայնքի կյանքում: Նրա պաշտոնավարման օրով է կառուցվել նաև ներկայիս նորակառույց դպրոցը: Էստոնացիների կառուցած փայտաշեն դպրոցը գործել է մինչև 2003թ., այնուհետև Համահայկական հիմնադրամի և արգենտինացի բարերարների միջոցով կառուցվել է նոր 200 տեղանոց հարմարավետ դպրոցը: Որտեղ նրա սրտացավ, հոգատար ու հետևողական վերաբերմունքը գործի հանդեպ լավ արդյունքներ են տվել, ինչը երևում է շինության լավ

Չորույցը վարեց՝ Լառա Պապիկյանը



Ն Ի Շ Ա Տ Ա Կ Ի Խ Ո Ս Ք

Նա «պատմեցի վրա» մնաց որպես սիրող ու սիրվող խոնարհ հայ կին, 6 զավակների սիրագործ մայր, 21 թոռների ու 40 ծոռների գթառատ տատ, 5 փեսաների նվիրյալ զոքամեջ և 2 եղբայրների հովանի թույր:

Ծանր հիվանդությունից հետո, 83 տարեկան հասակում կյանքից հեռացավ Պայծառ Մացակի Պետրոսյանը (Յամբարյան): Նրան բարությունը կհիշեն ոչ միայն իր ծննդավայրում՝ Արևաշողում, այլև այն բազում մարդիկ, ովքեր որևէ կերպ առնչվել էին նրա հետ, վայելել նրա ճոխ ու արտաբաց հյուրասիրությունը:

Նրա 4 զավակներն ու 10 թոռներն ստացել են բարձրագույն, իսկ 9-ը թոռները միջնակարգ-մասնագիտական կրթություն, 3 դուստրերն աշխատել են դպրոցի և մանկապարտեզի տնօրեն, իսկ որդին՝ Պրեդիկ (Մելս) Յամբարյանը աշխատել է Արևաշողի գյուղխորհրդի, Շենավանի կուլտուրայի տնօրեն և Սպիտակի շրջկոոպի նախագահ: Նրա աղջիկները, փեսաներն ու թոռներն այսօր զբաղեցնում են պետական պաշտոններ, աշխատում են շինարարներ, ուսուցիչներ, զբաղվում են գործարարությամբ և գյուղացիական տնտեսությամբ:

Վվադ, Պայծառին ուղեկցել են ոչ միայն խնդությունն ու ռախտությունը, այլև տիրությունն ու ողբերգությունը: Անժամանակ ու անսպասելի կյանքից հեռացել են նրա սիրելի 3 զավակները՝ Մելսյան, Մելսիկը և Անահիտը՝ խոր վիշտ ու հոգու ցավ պատճառելով կյանքի մայրամուտն ապրող ամուսիններին: Ու չնայած ծանր կորուստներին՝ նա իր մեջ ուժ էր գտել մաքառել կյանքի հարվածների դեմ:

- Մի մայրիկ կար Սպիտակի Արևաշող գյուղում, Որն իր բարի ու մարդամտ ծայրահեղով Մարդու սիրտ էր բուծում: Մի տնարար, խանութ-խաթուն, Մի հյուրասեր, ձեռնառատ մայրիկ, Արևաշող, արևահամ, Պայծառ մայրիկ:

Հարգատներ

3 ← աջակցվող ծրագրի շրջանակներում դպրոցի 1-4-րդ դասարանների երեխաներն օգտվում են անվճար սննդից, որը պատրաստվում է դպրոցի ճաշարանում: «Համայնքների աջակցման ծրագրերի» միջոցներով նախ մաքրվել է դպրոցի շրջակա 1700 քմ. տարածքը և ցանկապատվել: Ստեղծվել է վոլեյբոլի խաղադաշտը, նախատեսվում է գյուղապետարանի աջակցությամբ ստեղծել նաև ֆուտբոլի խաղադաշտ: Մինչև այժմ չենքը ջեռուցվել է էլեկտրականությամբ, բայց սպասվում է, որ այս տարվա ընթացքում գյուղը կգազի-


ֆիկացվի և դպրոցը ևս կօգտվի: Ներկայումս մանկավարժների վճարման դրույքաչափը կազմում է 70.000 դրամ, ինչը գոհացնում է մանկավարժներին: Դպրոցի աշխատանքներին խոչընդոտող հանգամանքներ չկան, բացի երեխաների թվաքանակի պակասից: Դպրոցում ուսուցման որակը բարձր է, չնայած շրջանավարտների փոքր թվաքանակին՝ ամեն տարի նրանցից 4-5-ը ընդունվում են տարբեր բուհեր: Նրանցից շատերն արդեն ավարտել են բուհը և աշխատում են տարբեր ոլորտներում,

աշխատողներ կան նաև հարազատ դպրոցում, ունեն երկու բարձր զինվորական պաշտոնյաներ և այլն: - Հուսով ենք, որ ապագայում կավելանա նաև երեխաների թվաքանակը, քանի որ մեր երկիրը զարգանում է, առաջ է գնում, կխթանվի նաև ծնելիությունը ու մենք շատ երեխաներ կունենանք,- ապագայի համրեպ հավատով ու սպասելիքներով վերջապետեց պատմությունը Ղուրսակի դպրոցի երիտասարդ տնօրեն Գարեգին Քարանյանը:

Աշխեն Գովհաննիսյան

ԿԱՐՈՒՇ ՄԿՐՏՉՅԱՆ

Մայիսի 1-ին կյանքից հեռացավ բազմավաստակ մանկավարժ Կարուշ Յամբարյանը: Ծնվել է 1931թ. ապրիլի 9-ին, Արթիկի շրջանի Յայկասար գյուղում: Դեռ 3 տարեկանը չբողորած, նրա ընտանիքը, տեղափոխվում է Գյումրի: Հայրը՝ վարպետ Յամիկը, դերձակ էր և, մի կերպ հոգում էր կնոջ ու անչափահաս 4 տղաների կարիքները:



Երկրորդ աշխարհամարտի ժամանակ ռազմադաշտ են մեկնում 3 եղբայրները, որոնցից երկուսը ընկնում են մարտադաշտերում, իսկ երրորդը վերադառնում է որպես հաշմանդամ: Այս հեռավոր ու դժնդակ տարիների ընթացքում զրկանքներին դիմակայելով՝ Կարուշն ավարտում է թիվ 7 միջնակարգ դպրոցը, ապա Գյումրիի մանկավարժական ինստիտուտի ֆիզմատ ֆակուլտետը՝ գերազանցությամբ դիպլոմով: 1955թ.-ին Կարուշ Մկրտչյանը՝ որպես նորավարտ ուսուցիչ, աշխատանք է գործուղվում Սպիտակ: - Սպիտակը դարձավ իմ երկրորդ հայրենիք,- հաճախ էր ասում Մկրտչյանը: Եվ դրա մեջ իմաստ կար: Նա կյանքի ընկեր ընտրեց Սպիտակում: Այստեղ թիվ 1 և 3 միջնակարգ դպրոցներում դասավանդելու տարիներին Կարուշ Մկրտչյանը սիրեց ու սիրվեց իր նոր «հայրենիքի» մեծի ու փոքրի կողմից, երկար տարիներ դարձավ ու մնաց որպես մաքեմատիկայի անփոխարինելի գիտակ ուսուցիչ: Կարուշ Մկրտչյանը այնուհետև երկար տարիներ դասավանդել է Կիրո-

Մի խումբ ընկերներ

ԿԻՆՎԱԲԵՆԱԿ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՅՈՒ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵ ԷՐ ԱՐՄԵՆ ԶԻԳԱՐԽԱՆՅԱՆՆԻՆ



Կինոյի մեծ վարպետ Արմեն Զիգարխանյանը 2007թ. նոյեմբերին նկարահանվող խմբի հետ մեկնել էր Ուկրաինայի մայրաքաղաք Կիև «Ось ординат» հեռուստաֆիլմի նկարահանման համար: Ինչպես տեղեկացնում է ուկրաինական «Жизнь за неделю» թերթը, ֆիլմը լիրիկական մի կատարելություն է, որտեղ Զիգարխանյանը կատարում է պակիկի դերը, որը լեռնային առևից եկել էր քաղաք իր միակ թոռնուհուն ամուսնացնելու համար: Նկարահանվում էր իսկական լեռնաբնակների հարսանիք: Նկարահանմանը կատարվում էին քաղաքի շատ բանուկ հատվածում: Նկարահանման հրապարակում հավաքվել էին նաև կինոբնակ բազմաթիվ հայեր, որոնցից ոմանք նույնպես նկարահանվում էին արտիստի հետ ֆիլմի էպիզոդիկ դերերում: Այդպիսի մի դերում նկարահանվել է նաև մեր համաքաղաքացի Էդիկ Խաչատրյանը: Էդիկ Խաչատրյանը ընտա-

նիքով Կիև է տեղափոխվել երկրաշարժից հետո և մինչև օրս բնակվում է այնտեղ: Ֆիլմի նկարահանման ժամանակ հայերը ոչ մի որպես հանգիստ չէին թողնում արտիստին, բոլորը ցանկանում էին գրուցել, նկարահանվել, չփվել, հաղորդակցվել նրա հետ: Իհարկե, վարպետի համար հնարավոր չէր սեղմ ժամանակահատվածում շփվել բոլորի հետ, բայց Էդիկ Խաչատրյանին հաջողվեց հյուրընկալել մեծ վարպետին սեփական հարկի ներքո և ամսահացնել այդ պահը, ինչպես տեսնում ենք այս լուսանկարում: Էդիկ Խաչատրյանի այս ժպտադեմ դուստրը՝ Յամիկը սովորում է Կիևի Տարաս Շևչենկոյի անվան համալսարանի ասպիրանտուրայում և գրում է գիտական աշխատանք Հայոց ցեղասպանության վերաբերյալ ուկրաիներեն լեզվով, որի գիտական ղեկավարն է ՀՀ-ում Ուկրաինայի դեսպան Ալեքսանդր Բոժկոն:

Սեփական լրատվություն

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Սպիտակի մտավորականներ» հկ-ն Հայաստանի ՓՄՁ-ՁԱԿ հիմնադրամի աջակցությամբ Սպիտակի տարածաշրջանում անց է կացնում հաշվապահների վերապատրաստման դասընթացներ և վաճառողների խորհրդատվություն հետևյալ թեմաներով՝

- ԴԱՆՆՆԹԵՆԵՐ՝ 1. «ՀՀ հարկային օրենսդրության պարզաբանումներ» 2. «ՀՀ աշխատանքային օրենսդրության պարզաբանումներ» 3. «Հաշվապահական հաշվառում» 4. «Շուկայագիտություն» 5. «Կառավարում» 6. «Ֆինանսական կառավարում» 7. «Մարդկային ռեսուրսների կառավարում» 8. «Արտադրության կառավարում» 9. «ՓՄՁ- հասարակություն» կապերի ստեղծում 10 Վաճառող-վաճառողուհիների դասընթաց
- ԽՈՐՀՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ 1. Չեռնարկության տնտեսական գործունեության վերլուծություն 2. Ներդրումային և զարգացման ծրագրերի կազմում 3. Գործարար ծրագրերի մշակում 4. Չեռնարկության կառավարման բարելավում 5. Մարքեթինգի բարելավում 6. Շուկայի ուսումնասիրություն 7. Չեռնարկության զարգացման խորհրդատվություն (OD) 8. Հաշվապահության վարում և ֆինանսների կառավարում 9. Հարկային և մաքսային խորհրդատվություն 10. Իրավաբանական խորհրդատվություն

Դասընթացներին և խորհրդատվությանը մասնակցողներին տրվում է վկայական: Մանրամասնությունների համար զանգահարել 2-30-38, (094) 34-56-94, (0322) 2-13-70 հեռախոսահամարներով:

Աղվան Յամբարյանը, աղջիկները, փեսաները, հարսները, թոռները և ծոռները խոր վշտով հայտնում են սիրելի կնոջ, մոր, զոքամեջի, սկեսրոջ, տատիկի Պայծառ Յամբարյանի մահը:
Խաչիկ Մաշակարյանը խորապես վշտացած է համադասարանցի Ռոման Յակոբյանի ողբերգական մահվան առթիվ և ցավակցում է հանգուցյալի հարազատներին և մերձավորներին:
«Լուսարձակ» թերթի խմբագրակազմը ցավակցում է խմբագրության նախկին աշխատակիցներ Սարինե Մկրտչյանին և Արարատ Խաչատրյանին, նրանց սիրելի՝ Կարուշ Մկրտչյանի մահվան առթիվ:

Գլխավոր խմբագիր՝ ՖԱՐՄԱՐ ԱՓՈՒՋԱՆՅԱՆ հմբ. հասցեն՝ ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան փող. 7/23, հեռ. 2-30-38, 2-35-38 Կայքէջ՝ http://www.lusardzak.com Ստորագրված է տպագրության 14.05.2008թ.	Համարի թողարկման պատասխանատու՝ Ֆ. ԱՓՈՒՋԱՆՅԱՆ Համակիպարզչային շարվածքը՝ «Լուսարձակ» թերթի խմբագրություն: Ծավալը՝ 1 տպագր. մամուլ: Տպաքանակը՝ 700 օրինակ Գրանցման վկայական 01ՄՕՈՍ130	Տպագրվել է «ՄԻՄ տպագրատուն» ՄՊԸ-ում: Վաճառոր, հեռ.՝ 4-02-29: Նյութերը չեն գրախոսվում, չեն վերադարձվում: Չեղինակները պատասխանատու են փաստերի ճշտության համար:	Լրատվական գործունեությունն իրականացնող՝ «Ափուջանյան և որդիներ» ՍՊԸ ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան 7/23: Գրանցման վկայական՝ Օ3 Ա Օ5 23 38, տրման օրը՝ 05.08.02թ. Գինը պայմանագրային:
---	---	---	--